∴

Ալաշկերտից մեզ շատ տխուր լուրեր են գալիս։ Այդ տաճկական գաւառի բոլոր հայերը պատրաստւում են գաղթել դէպի Ռուսաստան, գլխաւորն զզուած լինելով հրոսակ քրդերի բռնաբարութիւններից և թուրք տեղական վարչութեան ապիկարութիւնից։ Մինչև այժմս քրդերը իբրև աւազակներ էին գործում, իսկ այժըմ կազմակերպուած իբրև կանոնաւոր զօրք «Համիդիէ» անունով, որ ցերեկով աշկարայ խլում են հայ գիւղացու ունեցած չունեցածը, նոյն իսկ կառավարութեան աչքի առաջ և անկասկած՝ տեղական իշխանաւորների դրդմամբ։ Շատ գիւղերում բանի ուժով խլել են հայ գիւղացու հողերը և իրենց անասուններին են ուտեցնում դեռ չհասած ցանքսերը։ Կանանց, աղջիկների բռնաբարութեան և առևանգութեան դէպքերը սովորական բան են դարձել։ Կարծես բաւական չէին տաճկահպատակ քրդերը, մի սահմաններից էլ ծածուկ փախչելով անցել են Ալաշկերտ, ինչպէս մեզ հաւատացնում են, մօտ 500 տուն ռուսահպատակ քրդեր, որոնց տաճիկ իշխանաւորները բնակեցրել են հայ գիւղերում։ Գաղթականներից եկածները մեզ պատմեցին, որ բռնութեամբ խլել են հայերից Համատ և Խաչլու գիւղերը, արտաքսելով քրիստոնեայ բնակիչներին և նրանց տեղը քրդեր լցրել։ Գաղթականների մեծ մասը մեր համբաւաւոր Ս. Յովհաննէս վանքի գիւղերն են, այն է Ուչքիլիսայից, կան գաղթականներ և հետևեալ գիւղերից. Մազրէ, Դորաքիլիսա, Չըլկանի, Երիցու գեղ, Մանկասար, Բօթի, Ղազի, Եօնջալու, Քուրղըլան։ Այս գիւղերի բնակիչներից մի քանի տուն գաղթել են, մնացածներն էլ սպասում են հունձքը անեն և գաղթելու են աշնանը։ Հարստահարուած հայերը ոչ մի միջոց չունին Սուլթանի բարեգթութիւնը հայցելու։ Տեղական իշխանաւորները նրանց գանգատները չեն լսում և ցոյց տալով ռուսաց սահմանը, ասում են նրանց. «Եթէ մեզնից դժգոհ էք, գնացէք ձեր բարեկամ ռուսների մօտ»։ Իսկ մեզանում հողի սաստիկ պակասութիւն լինելով, հարկաւ նորեկ գաղթականները մնալու են առանց հողի և դիմելու են մուրացկանութեան, կոտորուելով Երևանեան դաշտի իրենց համար անսովոր և անտանելի շոգ կլիմայից։

Որչափ էլ Մայր Աթոռս իւր ուժերը չինայէր, անշուշտ անկարող է գանուելու այդչափ գաղթականներին գոնէ ժամանակաւորապէս օգնելու։ Ուրեմն և կրկնուելու են այնպիսի սարսափելի կոտորածները, որոնք տեղի ունեցան անցեալ ռուս-թրքական պատերազմի գաղթականութեանց ժամանակ, եթէ Ալաշկերտցիների այս նոր գաղթականութեան առաջը չառնուի։ Մենք հրաւիրում ենք Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի ամենալուրջ ուշադրութիւնը այս տխուր իրողութեանց վրայ։ Վերջապէս պէտք է յիշել Աւետարանի այն մռռացուած սուրբ խօսքը, թէ Հոգիս քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։

Թէ պատրիարքը և թէ Կ. Պոլսի Ազգային ժողովը պարտաւոր են միացեալ ուժերով դիմել Վեհափառ Սուլթանին և արդարութիւն պահանջել հաւատարիմ կորած-մոլորուած քրիստոնեայ հպատակների համար, քանի որ դեռ բոլորովին ուշ չէ և բանը բանից չէ անցել։

Գաղթականները գանգատում են մասնաւորապէս «Համիդիէ» զօրք անուանուած հրոսակների գլխաւոր՝ Ռահմի փաշայից։

Ամսիս 21-ին Մայր-Աթոռիցս դէպի Երուսաղէմ ուղևորուեց Միաբանութեանս կողմից Պատգամաւորութիւն Նորընտիր Վեհափառ Հայրապետին ընդառաջ։ Պատգամաւորութեան անդամներն են՝ երկու Սինոդական անդամք, Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան և Գեր. Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեան, և երկու աբեղայք՝ բարեշն. Հ. Եփրեմ Սուքիասեան և Հ. Մեսրոպ Տէր-Մովսիսեան։

* * *

Մեծապատիւ բժշկապետ պ. Յովհաննէս Գասպարեանցը ի յիշատակ իւր վաղաթառամ եղբօրորդու Յարութիւն Գասպարեանի տրել է հետևեալ բարեգործական նուէրները. 1. Ս. Էջմիածնի ձեմարանին 500 ր. 2. Շուշուայ թեմ. դպրանոցին՝ 400 ր. 3. Ներսիսեան դպ. 400 ր. 4. Թիֆլիսի Հոգևորականների Ապա-

հովութեան Արկղին՝ 300 բուբլի։ Այժմ էլ մեծ. բժշկապետը՝ կարդալով «Արարատի» հրաւէրը յօգուտ սովելոց՝ իւր ծխատէր քահանայ՝ Արժան. Ս. Բէգնազարեանցի՝ ձեռքով ուղարկել է 200 բուբլի։ Հ. Բէգնազարեանցը իւր կողմից աւելացրել է այդ գումարի վրայ 20 բուբլի։

* *
*

Բագուից պ. Գ. Մ. Առափելեանցը ուղարկել է յանուն Ամենապատ. Տ. Տեղակալի հարիւր բուբլի սովեալների համար հետևեալ երկտողով. «Կարդալով ձեր ազգասէր հրաւէրը «Արարատ» ամսագրում՝ Առևտրական Տուն Գ. Մ. Առափելեանց և ընկերութիւն իւր սրբազան պարտականութիւնն է համարում օգնել իւր չքաւոր և քաղցած եղբայրներին՝ ուստի ընդ սմին ներփակեալ ուղարկում է Ձեր Սրբազնութեանը հարիւր բուբլի աղքատ չքաւորներին հասցնելու համար։

Ներկայացուցիչ Առևտրական Տան Գ. Մ. Առափելեանց և ընկերութեան՝ Գրիգոր Մ. Առափելեանց»։

Ս. Էջմիածինը տեսնելով ժողովրդի տագնապը՝ բաց արաւ իւր ցորենի ամբարները և գրեթէ իւր բոլոր պաշարը բաժնեց սովեալներին՝ ոմանց ձրի՝ ոմանց փոխարինաբար (առանց վերադրի) և մեծ մասին ծախելով ընթացիկ գնից պակասով՝ որով մեծապէս արգելք եղաւ ամբողջ Երևանեան նահանգում հացահատիկների գների չափազանց բարձրանալուն։ Բայց որչափ և մեծ լինի վանքի օժանդակութեան չափը (1200 խալուարից աւելի)՝ այսուամենայնիւ միակ ուժով Մայր Աթոռս անկարող է եղած մեծ կարօտութեան առաջն առնել։ Մնում է որ բարեգործ ազգայիններըը շտապեն ըստ կարողութեան հետևել Մայր Աթոռի տուած օրինակին՝ ինչպէս այդ արին պ. պ. Առափելեանցը և Գասպարեանցը։